

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ՕՏԱՍՊՈԼՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԵՕՍԻԻՐՃԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Զ .

(Շարունակութիւնն :)

Նախապէս օթարան գաղթական Հայերու, ապա եղած է Հիւանդանոց, մաս կազմելով Նաուր Գաբուի Ազգ. Հիւանդանոցին եւ տեւած է մինչեւ 1833, մէջն ալ ունենալով Ս. Յարութեան նուիրուած մատուռ մը, որուն յիշատակութիւնը առաջին անգամ կը կարգանք, Ս. Երրորդութեան եկեղեցիին Ս. Լուսաւորչի պահարանը գտնուած եւ 1831 թուականը կրող պատկերի մը յիշատակարանին մէջ, ինչպէս գրած եմ երբեմն<sup>1</sup>:

Այս Հիւանդանոցին հիմնադիրն եղած է Շնորհք ամիրայ (տես Շանթաթարութիւններուս առաջին հատորը, էջ 202):

Պերաի Հիւանդանոցին մասին քանիցս գրած ու հրատարակած ըլլալով<sup>2</sup>, հոս աւելորդ կը համարիմ երկար խօսիլ եւ կը բաւականամ յաւելով, թէ Հիւանդանոցին շէնքը 1833էն յետոյ ծառայած է աղքատանոցի, եւ տարիներ վերջն ալ բոլորովին նորոգուելով ու ընդարձակուելով փոխուած է վարժարանի:

Պերաի 1870ի մեծ հրդեհէն յետոյ առժամաբար հոն փոխադրուած է, ինչպէս գրած եմ վերեւ, Նարեկեան վարժարանը որ Ս. Երրորդութեան կալուածներուն հետ այրած էր, եւ որ վերաշինուեցաւ իւր առջի տեղին վրայ դարձեալ: Այս վարժարանին մէջ տեղի կ'ունենար 1876ին, ժողովները Երեւելեան դպրոցասիրաց ընկերութեան, որ կ'իլիկեան եւ Արարատեան ընկերութիւններու հետ կազմեց «Միացեալ» հոչականուն ընկերութիւնը:

Ս. Յարութեան մատուռը եւ յարակից դպրոցը շատ հին ու խարխուղ ըլլալով վար առնուեցան ու տեղը շինուեցան 1895ին արդի եկեղեցին ու երկսեռ վարժարանները եւ կնքուեցան Էսաեան անունով, որովհետեւ ծախքը

<sup>1</sup> Արեւել, թիւ 6542, 14 յուլիս 1907, Կ. Պոլս: <sup>2</sup> Հանդէս ԱՊՕՐԵԱՅ, Վիեննա 1896, էջ 6: Սարգսի, Կ. Պոլս, Գ. տարի, թիւ 643: Արեւել, Կ. Պոլս, թիւ 6514, 6527, 6535 յունիս-յուլիս 1907 տարուայ: Երեւել 2էլեպի, Վիեննա 1913, էջ 202: Ա. Հատոր:

հոգացին Յովհաննէս եւ Մկրտիչ Էսաեան եղբայրները:

Հսկայ շէնք մ'է քարուկիր՝ որուն մուտքի դրան վերեւ գրուած է «Էսաեան վարժարան», կիսաբոլորակ երկաթեայ շրջանակի մը մէջ. իսկ փակին ձախ որմին վրայ ալ փորագրուած է հետեւեալ Տ առ շ արձագրութիւնը:

Ազգային

վարժարանս երկսեռ

ի հիմանց կառուցեալ ի վերայ սեպհական գետնոյ ազգիս

շինեցաւ բովանդակ արդեամբք եւ ծախիւք Յովհաննէս եւ Մկրտիչ Գ. Էսաեան երկուց հարազատաց եւ անուանեցաւ Էսաեան վարժարան յամի Տեառն 1895

Էսաեան եղբայրներու այս բարերարութիւնը թէեւ յոյժ գրուատելի եւ առ յաւէտ յիշատակելի, բայց գիտնալ պէտք է՝ որ անոնց այդ դպրոցաշինութեան բուն թելադիրներն եղած են՝ Պերաի քարոզիչ բարեյիշատակն Գարեգին եպ. Արուանձտեանց եւ նաեւ՝ Գաբրիէլ Նորատունկեան:

Էսաեան վարժարանը հասուցած է ուսումնական աշակերտներ եւ աշակերտուհիներ, եւ հակառակ շատ մը արգելքներու՝ կը շարունակէ ըլլալ միշտ կրթական լաւ անդաստան մը: Վարժարանը ունի ուսուցչական ընտիր խումբ մը. անոր ծախքերը կը հոգան թաղական խորհուրդը եւ Պերաի կալուածոց Հոգաբարձութիւնը:

Հոն տեղի ունեցած է գրական կարեւոր հանդէսներ, գիշերային դասախօսութիւններ:

Այս վարժարանին մէջ էր որ Հայ բժշկական Միութեան կազմակերպութեան նախնական գումարումները տեղի ունեցան 1911—1912:

Ս. Յարութեան եկեղեցին, վար առնուելով վերաշինուած է վարժարանին հետ միաժամանակ եւ անոր ետեւը գտնուած պարտէզին մէջ. սիրուն է, քարուկիր, որուն արձանագրութիւնը թէեւ անգամ մը հրատարակած<sup>1</sup>, բայց կարեւոր կը համարիմ հոս ալ կրկնել նոյնութեամբ, «Եկեղեցիս տեառնազրեալ յանուն եւ ի փառս

<sup>1</sup> Տարեցոյց ԱԶԳ. Հիւանդանոցին, տարի 1900, էջ 168:

Սրբոյ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ողորմութեամբն Աստուծոյ յայս նուագ ի հիմանց

շինեցաւ<sup>1</sup> բովանդակ արդեամբք եւ ծախիւք Յովհաննէս եւ Մկրտիչ Գ. Էսաեան երկուց հարազատաց, ի Հայրապետութեան Հայոց Տ. Տ. Մկրտիչ Խրիմեան վեհափառ կաթողիկոսի

եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Մատթէոս

Իզմիրլեան սրբազան Արքեպիսկոպոսին Յամի Տեառն 1895 եւ տոմարական թուականին Ազգիս ՌՅԽԳ—ՌՅԽԳ. «Ես եմ Յարութիւն եւ կեանք»:

Այս եկեղեցիին մէջ կը պահուի Պերաի Հիւանդանոցէն մնացած երեք յիշատակ, արծաթ միւռնութիւն մը եւ երկու պղնձի աման:

Միւռնութիւն վրայ փորագրուած է երեք առ յ բոլորգիր հետեւեալը՝

«Յշտկ. է, Պէյօղլու Հիվնդանոցի Մհսի թումնասի հոքուն Քնծպտ. Մհտս. Պետրոս որ եղէվ պատմառ, մթէվլլի Մհսի, Յարութիւն, Մհսի. Յակոբ, Քէվորք, Օհաննէսն, թըվի ՌՍԿԷ. (= 1818):

Իսկ ամաններէն փոքրին վրայ երկաթագիր փորագրուած է՝

Յշտկ. է Ավաքերէնց Տր. Պետրոսի որդի Տրացու Պողոսին Պէյօղլու Յիվնդանոցին 1235

(այս 1235 թուականը օսմ. է եւ = է 1820ի: Մեծ ամանին վրայ ալ դարձեալ երկաթագիր փորագրուած է,

Յշտկ. է Պէյօղլու Հիվանթնց քանծապետ Մհսի Պետրոս, պարոն Մկրտիչ, պարոն Անաբէլ պարոն Զիրակ, պարոն Խէվոն 1830:

<sup>1</sup> Վերաշինեցաւ պետր էին գրեւ:

Մշն երեք յիշատակարանները<sup>1</sup> յոյժ կարեւոր, հրատարակած եմ արդէն 1907 յուլիս 6ի Արեւելը թերթին մէջ, ապացուցանելու համար թէ Պերաի մէջ ալ ունեցած ենք Ազգ. Հիւանդանոց, որուն գոյութիւնը նոյն տարին ժխտել, ուրանալ կ'ուզէր Տէր Միքայէլ Աշճեան իւր կարգ մը անվաւեր փաստերով, մինչ Ֆրանսացի բժիշկ Գլա. Բրայէր իւր Neuf années à Constantinople աշխատութեան մէջ մեծ տեղ կուտար այդ Հիւանդանոցին<sup>2</sup>:

Տարիներ առաջ հանգուցեալ Թագ Փափաղեանի կտակած մէկ կարեւոր գումարով, եւ Օրմանեան պատրիարքի ջանքերով Ազգը տէր եղաւ Ս. Յարութեան ետեւի փողոցին մէջ գտնուած Գլա. Գաննի դեղագետին սեպհական ընդարձակ տունին, եւ հոն հաստատեց երկսեռ մանկապարտէզ մը, անոր պարտէզն ալ խառնելով Էսաեանին եւ Ս. Յարութեան պարտէզին, ուր աշակերտներ օրն ի բուն կը զբօսնուէ իրենց մարմնամարզի երգախառն խաղերովն ու պարերով:

Ասոնք են ահա Պերաի քառուղիէն մինչեւ Թաքսիմ երկարող ճանապարհին աջ ու ձախ երկու կողմերը գտնուած հայկական բոլոր շէնքերը՝ եկեղեցի եւ դպրոց, որոնք պոլսահայ կեանքի պատմութեան շատ կարեւոր էջերը կը յօրինեն:

Ասոնցմէ զատ, հաստատուած են նաեւ այլեւայլ ժամանակներու մէջ հոս ու հոն մասնաւոր վարժարաններ, որոնք վաղանցիկ կեանք մը ունեցած են եւ յիշատակութեան արժանի բան մը թողած չեն:

\* \* \*

Կ'երեւի թէ Պերաի մէջ շատ հին ատեններն իսկ Հայ եկեղեցականներ բնակութիւն ունեցած են: Կ. Պոլսոյ առումին օրերը Պերա գտնուած է կ'ըսուի՝ Արրահամ Երեց մը<sup>3</sup>, որ

<sup>1</sup> Պերաի Հիւանդանոցին մէկ յիշատակն ալ կը մնայ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին մէջ. պղնձի փոքրիկ աման մ'է, վրան երկաթագիր Արձանագրութեամբ, որ է՝ սղեղուի, հիվանդանոցին, դէմքն, պաշի, միտիրոս, աղան, միթսվելուլուսն, օսվան, յիշատակն է, ԱՎՎԿ (որ ըսել է՝ 1807): <sup>2</sup> «Neuf années à Constantinople», Dr. A. Brayer. <sup>3</sup> Չափեան, Պոլս. Հայոց, Հատոր Գ. էջ 499:

